

**ԷՄՔՐԻՈՆԱԿԸ ՀԱԿԱՌԻՌՈՒՑՔԱՅԻՆ ՍՈՂՈՒԼՅԱՏՈՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՆԹԱՍՏԱՍՈՔՍԱՅԻՆ ԳԵՂՁԻ ՆԵՐԱՉԱՏԻՉ ԱՊԱՐԱՏԻ  
ՊՐՈԼԻՖԵՐԱՏԻՎ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՎՐԱ ՍՏՐԵՊՏՈՉՈՏՈՑԻՆՈՎ  
ԽԹԱՆՎԱԾ ՇԱՔԱՐԱԽՏԻ ՍՈՂԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**Առաջադրույթ Ե.Մ.<sup>1,2</sup>, ԱԼԱԲԵՐԵՅԱՆ Գ.Ա.<sup>2</sup>**

<sup>1</sup>Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի Էնդոկրինոլոգիայի ամբիոն,  
Երևան, Հայաստան

<sup>2</sup>Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի գիտահետազոտական կենտրոն,  
Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 21/12/2013 թ., ընդունված է՝ 15/02/2014 թ.

Ժամանակակից Էնդոկրինոլոգիայի արդի ուղղություններից են՝ մեդիատոր բնույթի Էնդոգեն ակտիվ այն նյութերի որոնումը, որոնք շաքարախտի պայմաններում ենթաստամոքսային գեղձի ներազատիչ ինկրետոր ռեպարատիվ պրոլիֆերատիվ պրոցեսների վրա ցուցաբերում են ընտրողաբար խթանիչ ազդեցություն: Շաքարախտի ստրեպտոզոտոցիանային մոդելի վրա մորֆոլոգիական և իմունոլոգիական տեսակետից, փորձարարական կենդանիների Էմբրիոնալ հակաուռուցքային մոդուլյատորի ներարկման պայմաններում, Լանգերհանսի կղզյակների սեկրետոր քիչներում ուսումնասիրվել են ռեպարատիվ պրոցեսների բնույթը և առանձնահատկությունները: Սորֆոլոգիական հետազոտության համար ենթաստամոքսային գեղձի հյուսվածքի պարաֆինային կտրվածքները գունավորվել են հեմատոքսիլին-էոզինով և ազուր II- Էոզինով: Ենթաստամոքսային գեղձում BrdU դրական քիչների հայտնաբերման նպատակով թարմ սառեցված կրեոստատային կտրվածքները ենթարկվել են իմունոմորֆոլոգիական անալիզի: Հայտնաբերված է, որ առնետների ենթաստամոքսային գեղձի կղզյակների ապարատում և նրա ծորաններում, էքսպերիմենտալ շաքարախտի որոշակի փուլում, տեղի է ունենում ռեպարատիվ (վերականգնողական) պրոցեսների նկատելի աշխուժացում: Հայտնաբերված է նաև ենթաստամոքսային գեղձի նշված միկրոկառույցներում հնարավոր տեղային վերականգման մեխանիզմներ, ինչի մասին են վկայում իմունոֆերմենտային անալիզի միջոցով հայտնաբերված BrdU դրական քիչները: Կղզյակային ապարատի կառուցվածքային կազմակերպման վերականգնումը տեղի է ունենում ի հաշիվ (կենդանի մնացած) β-քիչների վերականգման, այսինքն՝ ռեպլիկացիայի ճանապարհով: Նշված ժամկետում, Էմբրիոնալ հակաուռուցքային մոդուլյատորի ներարկման պայմաններում, ենթաստամոքսային գեղձի կղզյակային ապարատում զգալիորեն ավելացել է Բրոմդեոքսիուրիդին-դրական Էնդոկրինոցիտների քանակը (առնետների հսկիչ խմբի բրոմդեոքսիուրիդին ցուցանիշների հետ համեմատած): Բրոմդեոքսիուրիդին-դրական քիչների քանակի բնույթի փոփոխության հիման վրա հաստատված է, որ Էմբրիոնալ հակաուռուցքային մոդուլյատորի պայմաններում ենթաստամոքսային գեղձի կղզյակային ապարատի կառուցվածքային կազմակերպման վերականգնումը տեղի է ունենում (կենդանի մնացած) β-քիչների ակտիվացման և նրանց հետագա պրոլիֆերացիայի՝ այսինքն նրանց ռեպլիկացիայի հաշվին: